Արձանագրություն N 3

N ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-17/1 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան-ի կարիքների համար *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի ճանապարհային ծածկի փոսային նորոգման, քայքայված հատվածների փոխարինման աշխատանքների* ձեռքբերման ՊԸ ընթացակարգի հայտերի գնատատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Աշտարակ 21.03. 2017թ.

Ժամը՝ 11.00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Վ.Սաֆարյան

Անդամներ՝

- ԳՊ/ԳԱ՝ Ա. Գրիգորյան
- ԳՊ/ԳԱ՝ Զ.Գևորգյան
- ԳՊ/ԲԱ՝ Ա.Մնացականյան
- ԳՊ/ԲԱ՝ Վ. Վարդանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀՄ՝ Հ. Հակոբյան

1. Ընդունել Ի գիտություն, որ **Սթոնս ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում առկա էր անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, Հավելված 9-ում (ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) **Սթոնս ՍՊԸ** –ի տնօրեն է նշվել Գուրգեն Սարգսյանը իսկ Սվետիկ Մկրտչյանին տրամադրած լիազորագրում **Սթոնս ՍՊԸ** –ի տնօրեն է նշվել Հայկ Ավագյան: Այդ իսկ պատճառով հանձնաժողովի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով, մինչև **2017թ. Մարտի 21-ը ժամը 11.00-ն** , **Սթոնս ՍՊԸ** -ից պարզաբանում ստանալու համար :

2. Մինչև կասեցման ժամկետի ավարտը Սթոնս ՍՊԸ-ի կողմից որևէ պարզաբանում չի ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին.

Ա) **Սուարդի ԲԸ** -ի կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Բ) **Սթոնս ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, քանի որ սահմանված ժամկետում Սթոնս ՍՊԸ-ի կողմից պարզաբանում չի ստացվել, ապա եթե ընդունենք որ ընկերության տնօրենն է Գուրգեն Սարգսյանը, ստացվում է որ հայտում առկա բոլոր փաստաթղթերը ինչպես նաև գնային առաջարկը, տուժանքի մասին համաձայանագիրը և վճարման պահանջագիրը ստորագրվել է Սվետիկ Մկրտչյանի կողմից ով լիազորված չէր տվյալ գործառույթը իրականացնելու համար(տրված լիազորագիրը առոչինչ է), իսկ եթե ընդունենք որ ընկերության տնօրենն է Հայկ Ավագյանը, ապա ստացվում է որ տուժանքի մասին համաձայանգիրը սխալ է լրացված (ընկերության տնօրենի վավերապայմանները) այդ իսկ պատճառով երկու դեպքում էլ **Սթոնս ՍՊԸ** -ի հայտը մերժվում է:

Գ) **Եղնիկիպես ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ՝ Եղնիկիպես ՍՊԸ -ի տնօրեն Մանուշակ Հակոբյանի փոխարեն ստորագրել է Մարինե Մկրտչյանը ով լիազորված չէր տվյալ գործառույթը իրականացնելու համար(լիազորագիր առկա չէ), այդ իսկ պատճառով **Եղնիկիպես ՍՊԸ** -ի հայտը մերժվում է:

Դ) **Վահրադյան Շին ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ՝ վճարման պահանջագիրը ստորագրված չէ որևէ անձի կողմից, այդ իսկ պատճառով **Վահրադյան Շին ՍՊԸ** -ի հայտը մերժվում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4. Արդյունքում որպես հրավերի պահանջներին համապատասխան կազմված և ներկայացված հայտ է համարվում Սուարդի ԲԸ -ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Անվանումը	Եղնիկիպես ՍՊԸ			Սթոնս ՍՊԸ			Սուարդի ԲԸ			Վահրադյան Շին ՍՊԸ		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ
1	ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի ճանապարհային ծածկի փոսային նորոգման, քայքայված հատվածների փոխարինման աշխատանքներ	11 295 458	-	11 295 458	9 333 500	1 866 700	11 200 200	**15 825 000**	**3 165 000**	**18 990 000**	14 763 000	2 952 600	17 715 600

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6. « ՀՀԱՄԱՇՏ-ՊԸԱՇՁԲ-17/1 » ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում Սուարդի ԲԸ -ն :

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

7. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի որակավորման պահանջների համապատասխանության մասին ներկայացվող փաստաթղթերն ուղարկելուց հետո, ոչ ուշ, քան վերը նշված փաստաթղթերի պատճենները և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի անդամների անունները

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Վ.Սաֆարյան

Անդամներ՝- ԳՊ/ԳԱ՝ Ա. Գրիգորյան

- ԳՊ/ԳԱ՝ Զ.Գևորգյան

- ԳՊ/ԲԱ՝ Ա.Մնացականյան

- ԳՊ/ԲԱ՝ Վ. Վարդանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀմ՝ Հ. Հակոբյան